

խրախուսեաց ինքնին ընդառաջել անհրաժեշտ հզորին, ոչ տալով նմա սողոսկել յոստան իւր, այլ իւրով աննկուն ձեռամբ ցուցանել զդիրս զոր ընտրեաց՝ իյետին հանգստարան: Ոչ ըստ կիսակտուր իմաստականութեան հակառակորդին իւրոյ աշխարհակալի, զպատանս մահուն՝ դրօշ ունայնութեան կենաց եւ բաղդի նշաւակելով՝ պարզել եւ յածեցուցանել ընդ քաղաքն, իբրու թէ զայն միայն յամենայն կալուածոցն՝ կարիցէ տանել ընդ իւր²³³. այլ սա զպսակ զագաթանն, որ եւ պսակ համօրէն աշխարհի, զխաչն քրիստոնէութեան՝ զոր խոստովանէր հաւատարմութեամբ, եւ որով զհետք մահակից եւ թագակից լինել տիեզերաց տնտեսողին, փափագեաց կարապետ ընթացուցանել՝ յոր հարկն եւ կամքն ուղղէին: Մեծագոյն արդարեւ յաղթանակ թագաւորութեան ցուցեալ՝ զքրիստոնէաբարն մեռանել առն թագաւորի: Ողջոյն ետ լռելեայն՝ իւրտի իւրում՝ գահուն եւ դարպասին, ամենագարդ դաստակերտին եւ ամենամուր բերդին Սիսուանայ, հրամայեաց հանել զինքն անտի, որպիսի եւ է դեսպակաւ կամ կառօք, եւ տանել ուր կամէրն: Եւ զի եղանակ էր գարնայնի, եւ ամենայն սարք եւ ձորք ծաղկեալք եւ զուարճացեալք պէսպէս երանգօք եւ բուրմամբք, որպէս օրէն է բնութեան բարձանցն այնոցիկ Կիլիկիոյ, անմահութեան՝ քան մահու թուէին յօրինել հանդէս հիահրաշ հարսանեաց. ընդ շաւիղ բացօթեայ՝ իբրեւ ընդ վեհագոյն յերկրի տաճար բնակիր՝ իգերաբունն թեւակոխելով, պատուիրէր ուղեւորել յուշիկ օթեվանօք՝ ընդ կողմն վանաց Ակներոյ, իրաստակերտ իւր, յոր քան ընդ ամենայն սրբավայրս Սիսուանայ՝ հաճեալ էր. անդ կամք եղեն նորա հանգուցանել զմեծախոհ զլուխն ծանրացեալ: Եւ յամենայն օթեվանս ուր զկայ առնուին՝ կոչեցեալ առ ինքն զպաշտօնեայս եւ զիշխանս՝ տայր նոցա խրատս զգուշաւորս, եւ յորդոր՝ սերտիլ՝ իւր միմեանց, որ է զօդ միաբանութեան, եւ յարիաբար զօտեւորութիւն՝ իպահպանութիւն աշխարհին, զոր ընդարձակեալ թողոյր յետնոցն, ամրացուցեալ զսահմանսն, եւ կարգեալ դէտս ըստ բաւականի. խոհականութեան եւ քաջութեան նոցին թողեալ զառաւելուլն եւ զհերքումն հակառակորդաց: Յանձն առնէր մանաւանդ՝ եւ յիշեցուցանէր զերդմունս նոցա՝ կալոյ հաւատարիմ դստեր իւրում պայագատի, որում ինամակալ եւ դաստիարակ կարգեալ ցուցանէր զգլխաւորս իշխանաց իւրոց՝ զՍիր

²³³ Բագումք վասն Սալահէտտինի պատմեն զայս հրամայեալ առնել, եւ այլք վասն այլոյ ուրումն արեւելեան եւ մսլիման սուլտանի: